



Save the Children

ԱՋԱԿՑԵԼՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ
ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
«ՍԵՅՎ ԴԸ ԶԻԼԴՐԵՆ»-Ի
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
2015 ԹՎԱԿԱՆԻՆ





ԱԶԱԿՑԵԼՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

«ՍԵՅՎ ԴՐ ՋԻՂԴՐԵՆ»-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ

Հայաստանյան ներկայացուցչության տնօրենի ուղերձը

Հարգելի բարեկամներ և գործընկերներ,

Յուրաքանչյուր տարեվերջին, հետադարձ հայացք նետելով, փորձում ենք ամփոփել մեր ձեռքբերումները և քաղած դասերը: «Սեյվ դր չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության համար 2015 թվականը եղել է հավակնոտ նպատակների և մարտահրավերների, հաջողված ծրագրերի և նոր նախաձեռնությունների տարի:

Այս տարի մեր թիմն աշխատել է տասը նախագծերի և նախաձեռնությունների շուրջ, նպատակ ունենալով աջակցել օգնության կարիք ունեցող երեխաներին: Հայաստանի տարածքում «Սեյվ դր չիլդրեն» կազմակերպության նպատակն էր խթանել նախադպրոցական տարիքի երեխաների վաղ մանկական խնամքը և զարգացումը, զարգացնել այլընտրանքային խնամքը՝ խնամատարության համակարգի ամրապնդման և ընդլայնման միջոցով, պայքարել պտղի սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատումների դեմ, բարձրացնել աղետների ռիսկերին դիմակայելու երեխաների և համայնքների ճկունությունը, նպաստել Սիրիայից Հայաստան տեղափոխված փախստական երեխաների և ընտանիքների ինտեգրմանը, ինչպես նաև նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց համար զբաղվածության հավասար հնարավորություններ ստեղծելու գործընթացին: Միևնույն ժամանակ, իրականացրել ենք աննախադեպ լայնածավալ վերլուծություն՝ ուղղված Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանության իրավիճակի բացահայտմանը, և աջակցել ենք շահերի պաշտպանության մի շարք նախաձեռնությունների, որոնք ուղղված են ազգային օրենսդրության մեջ երեխաների կարիքների և իրավունքների արտացոլմանը:

Մեր ծրագրերն իրականացվել են քաղաքացիական հասարակության, պետական և տեղական իշխանությունների, ՀԼՄ-ների, ծառայություն մատուցողների և, որ ամենակարևորն է, երեխաների հետ սերտ համագործակցությամբ, որոնց մասնակցությունն էլ ավելի է արժևորել մեր աշխատանքը: Մենք ոգեշնչված ենք «Սեյվ դր չիլդրեն» կազմակերպության երեխաների և երիտասարդության խորհրդատվական խմբի անդամների նվիրվածությամբ և կատարած աշխատանքով՝ երեխաներ և երիտասարդներ, որոնց ակտիվ մասնակցությունը և մեր նախաձեռնությունների շրջանակներում իրականացրած աշխատանքը զգալի ներդրում է մեր ծրագրերի համար: Մենք շնորհակալ ենք այն դոնոր կազմակերպություններին, ովքեր հավատացին և մեզ վստահեցին իրենց կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրականացումը: Մենք բարձր ենք գնահատում «Սեյվ դր չիլդրեն» կազմակերպության անդամ գրասենյակների կողմից ողջ տարվա ընթացքում ցուցաբերած մասնագիտական աջակցությունն ու տեխնիկական օժանդակությունը: Բազմաֆունկցիոնալ համակցված ջանքերի ու փոխլրացման շնորհիվ է, որ մենք կարողացանք աջակցել ավելի քան 30,000 անմիջական շահառուների՝ Հայաստանի ամբողջ տարածքում:

Ես նաև շնորհակալ եմ «Սեյվ դր չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության թիմին՝ իրենց բացառիկ նվիրվածությամբ կատարած աշխատանքի համար, որն ուղղված է օգնության կարիք ունեցող երեխաների համար երկարաժամկետ դրական փոփոխությունների ապահովմանը: «Սեյվ դր չիլդրեն» կազմակերպությանը միանալուս առաջին իսկ օրվանից մինչև այսօր, ես գնում եմ աշխատանքի հպարտությամբ և ոգեշնչմամբ: Ինձ համար ոգևորության հիմնական պատճառներից մեկը հենց թիմի կազմակերպչական մշակույթն է, որ դրդում է բոլորին անել առավելագույնը և լավագույնս նպաստել ինչպես Հայաստանի, այնպես էլ ամբողջ աշխարհի երեխաների բարօրությանը:

Այս տարվա ձեռքբերումները գնահատելիս, մենք չենք դադարում մտածել Հայաստանի տարածքում բնակվող երեխաների և երիտասարդների առաջնահերթ կարիքների և խնդիրների մասին: Հաջորդ երեք տարիների ընթացքում «Սեյվ դր չիլդրեն» կազմակերպությունը շարունակելու է իր աշխատանքը Հայաստանում՝ նպաստելով երեխաների կենսունակության բարձրացմանը, կրթության և պաշտպանության ապահովմանը: Սա հավակնոտ հանձնառություն է, որի իրականացումը հնարավոր է ապահովել միայն բոլոր շահագրգիռ կողմերի՝ այդ թվում երեխաների և նրանց ընտանիքների հետ արդյունավետ համագործակցության միջոցով:

Մեր աշխատանքի կարևոր կողմերից մեկը հաշվետվողականությունն է. մենք հաշվետու ենք բոլոր շահառուների, դոնոր կազմակերպությունների, գործընկերների և լայն հանրության առջև: Սույն տարեկան հաշվետվությունը ձեր առջև մեր հաշվետվողականության ապահովման բազմաթիվ ձևերից մեկն է միայն: Ես առաջարկում եմ ձեզ ընթերցել սույն փաստաթուղթը, որն ամփոփ կերպով ներկայացնում է 2015 թվականի ընթացքում մեր կազմակերպության կողմից կատարած աշխատանքը, մեր ձեռքբերումները և քաղված դասերը:

Հարգանքով,
Արսեն Ստեփանյան
Տնօրեն

Դեկտեմբեր, 2015 թ.

Մեր տեսլականը

Աշխարհ, որտեղ ապահովված է յուրաքանչյուր երեխայի գոյատևման, պաշտպանության, զարգացման և մասնակցության իրավունքը:

Մեր առաքելությունը

Ոգեշնչել մարդկությանը փոխելու վերաբերմունքը երեխաների հանդեպ և հասնել անհապաղ և կայուն փոփոխությունների երեխաների կյանքում:

Մեր մասին

«Սեյվ դը չիլդրեն»-ը աշխարհի առաջատար երեխայակենտրոն անկախ կազմակերպություններից է: Մենք գործում ենք մոտ 120 երկրներում: Մենք փրկում ենք երեխաների կյանքը, պայքարում ենք նրանց իրավունքների համար, և օգնում են իրագործել իրենց ներուժը:

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչություն

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը հաստատել է իր ներկայությունը Հայաստանում 1993 թվականին՝ ի պատասխան Խորհրդային Միության և կենտրոնացված տնտեսության փլուզման, 1991-1994 թվականներին Ադրբեյջանի հետ Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների համար պատերազմի և 1988 թվականի ավերիչ երկրաշարժի հետևանքով ստեղծված իրավիճակին: Այդ ժամանակից ի վեր «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը ցուցաբերել է ավելի քան 60 միլիոն ԱՄՆ դոլորի չափով օգնություն առավել խոցելի երեխաներին և նրանց ընտանիքներին՝ վերականգնման և զարգացման ծրագրերի շրջանակներում: Առողջապահության, կրթության և սոցիալական ոլորտի կենսականորեն կարևոր նախաձեռնությունների շնորհիվ բարելավվել են ամենաաղքատ բնակչության հիմնական կենսապայմանները՝ համայնքային ծրագրերի և տեղական գործընկերների ու հաստատությունների կարողությունների զարգացման միջոցով: «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը ակտիվորեն համագործակցել է կենտրոնական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների և գործակալությունների հետ՝ ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի շրջանակներում երեխաների իրավունքների պաշտպանության ապահովման նպատակով:


2015 թվականին մենք փորձել ենք ամրապնդել երեխայի պաշտպանության ազգային համակարգը, բարելավել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների պաշտպանությունը, պայքարել պտղի սեռով պայմանավորված

հղիությունների արհեստական ընդհատումների դեմ, խթանել երեխաների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, նպաստել վաղ մանկության խնամքի և կրթության մատչելիության ու որակի ապահովմանը, քաջալերել առողջ ապրելակերպը, բարձրացրել աղետներին դիմակայելու՝ հատուկ կարիքներով և առանց հատուկ կարիքների երեխաների ճկունությունը, ստեղծել փախստականների ինտեգրման նպաստավոր միջավայր և խթանել հաշմանդամություն ունեցող անձանց միջին մասնագիտական կրթությունը և զբաղվածության հնարավորությունները:

Հայաստանում բնակվող երեխաների կյանքում երկարաժամկետ բարեփոխումներ իրականացնելու հանձնառությամբ, մենք աջակցություն ենք ցուցաբերել շուրջ 30,000 անմիջական շահառուների, և մենք հպարտ ենք մեր աշխատանքում գրանցած էական հաջողություններով:



Քարտեզ՝ մեր գործունեության աշխարհագրությունը



Երեխայի պաշտպանություն

Երեխաները մեծանում են ընտանեկան միջավայրում

Ընտանիքի հզորացումը և այլընտրանքային խնամքը Հայաստանում «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության գործունեության անկյունաքարերից մեկն է: Այն երեխաները, ովքեր զուրկ են իրենց սեփական ընտանիքի խնամքից, հատուկ խնամքի իրավունք ունեն և պետք է պատշաճ խնամք ստանան այն մարդկանց կողմից, ովքեր մշտապես հոգ են տանում, որպեսզի յուրաքանչյուր երեխա ստանա լավագույնը և ովքեր հարգում են նրանց կրոնը, մշակույթը և լեզուն: Նպատակ ունենալով ապահովել երեխաների՝ աջակցող և հոգատար ընտանեկան միջավայրում ապրելու, ինչպես նաև համայնքային սոցիալական և կրթական ծառայություններից օգտվել իրավունքը, «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը նպաստում է Հայաստանում այլընտրանքային խնամքի համակարգի ամրապնդմանը և բազմազանության ապահովմանը և ստեղծում է ընտանիքի ամրապնդման աջակցության ծառայություններ: Կազմակերպությունը նպատակ ունի աջակցել ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հիման վրա իրականացվող օրենսդրական և կարգավորող դաշտի համապարփակ բարեփոխումներին՝ ընտանիքի փոխարինման ծառայության համակարգի ամրապնդման և այլընտրանքային խնամքի տեսակների բազմազանության ապահովման, ինչպես նաև էական ընտանեկան աջակցության և մասնագիտական դեպքերի կառավարման համակարգի հաստատման համար, որը թույլ կտա առավել համապատասխան լուծումներ գտնել երեխայի և նրա ընտանիքի համար:

Երեխաները ծնվելու իրավունք ունեն՝ անկախ իրենց սեռից

1990-ական թվականներից ի վեր, Հայաստանում գրանցվում է ծնված երեխաների սեռային նկատելի անհավասարակշռություն՝ յուրաքանչյուր 100 իգական ծնունդների դիմաց 114-115 արական ծնունդների հարաբերակցությամբ: Նման հարաբերակցությամբ Հայաստանը պատկանում է աշխարհի մակարդակով արական ծնունդների ամենաբարձր ցուցանիշներ գրանցած երկրների շարքին՝ զիջելով միայն Չինաստանին (118) և Ադրբեջանին (116): Եթե այս միտումը շարունակվի, ապա 2060 թվականին Հայաստանը կկորցնի շուրջ 93,000 իգական սեռի ներկայացուցիչ, ինչը նշանակալի ցուցանիշ է մոտավորապես 3 միլիոն բնակչություն ունեցող երկրի համար:

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը պայքարում է սեռական խտրականության դեմ, նպատակ ունենալով նպաստել Հայաստանում պտղի սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատումների ծավալների կրճատմանը, հանրային կրթության և հանրության ջանքերի մոբիլիզացման միջոցով: Կազմակերպությունը հավակնում է հասնել սեղեկտիվ աբորտների թվի առնվազն 10%-ի կրճատման՝ մինչև իր գործունեության ավարտը: Թեև սեղեկտիվ աբորտների կանխարգելմանն ուղղված քաղաքականության բարեփոխումներն իրականացվում

Է մեր գործընկեր կազմակերպության կողմից, «Սեյվ դը չիլդրեն»-ը կազմակերպում է հանրային իրազեկման միջոցառումներ՝ տեղեկատվական, կրթական և հաղորդակցման նյութերի մշակման և հրապարակման, ավանդական և սոցիալական լրատվամիջոցներով տարածվող նախաձեռնությունների, համայնքային ռեսուրսների և ջանքերի մոբիլիզացման, տարբեր շահագրգիռ խմբերի՝ այդ թվում թիրախ խմբերի, ՀԼՄ-ների, բուժաշխատողների, տեղական ինքնակառավարման մարմինների, լրագրողների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների վերապատրաստման և կարողությունների զարգացման միջոցով, և այլն:

Կրթություն

Նախադրարողական կրթությունը մատչելի է Հայաստանում բնակվող երեխաների համար

Դեռևս վաղ տարիքում որակյալ խնամք ստացող և ուսուցման հնարավորություններից օգտվող երեխաներն ավելի լայն հնարավորություն ունեն առողջ մեծանալու, դպրոցում լավ սովորելու և իրենց ներուժի լիարժեք օգտագործման շնորհիվ իրենց բարեկեցությունն ու աշխատանքային արդյունավետությունն ապահովելու համար: Այս տեսանկյունից, ՀՀ կառավարությունը առաջնային է համարում նախադրարողական հաստատությունների ծառայությունների որակի բարելավումը և նպատակ ունի ավելացնել նախադրարողական հաստատություններ հաճախող երեխաների թիվը, մինչդեռ նախադրարողական հաստատությունների հաճախելիության մակարդակը շատ ցածր է: Նախադրարողական տարիքի երեխաների ընդհանուր թվի միայն 27 տոկոսն է հաճախում որևէ նախադրարողական հաստատություն: «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը, հավատարիմ մնալով իր ստանձնած պարտավորություններին, այն է՝ նպաստել վաղ մանկության խնամքի և զարգացման ծառայությունների մատչելիության բարձրացմանը և երեխաների համար ստեղծել նախադրարողական կրթության հնարավորություններ, շարունակում է գյուղական համայնքներում և Երևան քաղաքում վաղ մանկության խնամքի և զարգացման ներառական կենտրոններ ստեղծելու իր աշխատանքը: 2015 թվականին, Գեղարքունիքի և Լոռու մարզերի ութ գյուղերի և Երևան քաղաքի թվով երկու դպրոցների ավելի քան 450 երեխաներ ստացել են իրենց տարիքային խմբերին համապատասխան որակյալ խնամք և կրթություն և հաջողությամբ փոխադրվել տարրական դպրոց:

Հայաստանում իր հիմնադրման օրից ի վեր, «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը բարելավել կամ հիմնել է ավելի քան 100 նախադրարողական հաստատություն, որից օգտվել է մոտ 20.000 երեխա, և վերապատրաստման դասընթացներ է իրականացրել շուրջ 210 ուսուցիչների և խնամակալների համար՝ երեխայակենտրոն ուսուցման ինտեռակտիվ մեթոդաբանության կիրառմամբ: Թեև մեր աշխատանքը հետևողական է, սակայն մենք հասկանում ենք, որ մեկ նախադրարողական հաստատության կառուցմամբ չենք կարող ապահովել համընդհանուր մատչելիություն և հասանելիություն: Հետևաբար, 2015 թվականին մենք սկսել ենք ակտիվ գործունեություն ծավալել նախադրարողական կրթության զարգացման նոր պետական ռազմավարության մշակման շուրջ: Մենք փորձում ենք ապահովել, որպեսզի ազգային օրենսդրության և ռազմավարությունների մշակման գործընթացում նախադրարողական կրթության զարգացումը դիտարկվի որպես առաջնահերթ, մասնավորապես հաշմանդամություն ունեցող, գյուղական համայնքներում բնակվող և տնտեսապես անապահով ընտանիքներում ապրող և օժանդակության կարիք ունեցող այլ երեխաների համար:

Երեխաները ավելի ճկուն են աղետների ռիսկերին դիմակայելու հարցում

Հայաստանը գտնվում է աղետային ակտիվ գոտում: Երեխաները, հատկապես հատուկ կարիք ունեցողները, ավելի խոցելի են արտակարգ իրավիճակներում: Տարօրինակ է, սակայն հենց այդ խոցելի խմբերի և նրանց խնամակալների կարիքներն ու իրավունքները հաճախ անտեսվում են աղետների ռիսկի նվազեցման քաղաքականության և ծրագրերի մշակման ընթացքում: Արդյունքում, նրանք ավելի քիչ են տեղեկացված նախապատրաստական միջոցառումների, աղետների նվազեցման և դրանց դիմակայման գործողությունների մասին: Դպրոցների և այլ կրթական հաստատությունների շենքերը և շինությունները բավարար սեյսմակայուն չեն և գտնվում են անմիջապես վտանգի տակ, չունեն վթարային ելքեր, աստիճանները գրեթե փլուզված են, բացակայում են արտակարգ տարիանման սարքավորումները և առաջին օգնության արկղիկները, և այլն:

Այս տեսանկյունից, «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը կարևորում է Հայաստանում աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված աշխատանքները, նպատակ ունենալով խթանել երկրում ամենախոցելի խմբերի՝ երեխաների, իրենց ընտանիքների, խնամակալների և համայնքների՝ աղետներին դիմակայելու ճկունությունը: Աղետների ռիսկերի նվազեցման մեր ներառական ծրագիրը նպաստում է հաշմանդամություն ունեցող երեխաների համար դպրոցներում և համայնքներում ապահով միջավայրի ստեղծմանը: Մենք նաև աշխատում ենք ապահովել այդ երեխաների շահերի արտացոլումը ազգային քաղաքականության և օրենսդրության մեջ:

Երեխաները սովորում են դպրոցական առողջ միջավայրում

Մեր ծրագրերի մեկ այլ կարևոր ոլորտ է դպրոցներում առողջապահական և սննդի ծառայությունների բարելավումը՝ դպրոցներում մատուցվող առողջապահական և սննդի ծառայությունների չափանիշների և քաղաքականության մշակման գործընթացում ցուցաբերվող աջակցության միջոցով: Մեր ծրագրերի շրջանակներում մի շարք դպրոցներ ապահովվել են հիգիենայի պարագաներով: Մենք փորձում ենք խթանել երեխաների առողջ ապրելակերպը և վարքագիծը, բարելավել ծնողների և ծառայություն մատուցողների գիտելիքները և հմտությունները:

2015 թվականին, մոտ 800 երեխա մասնակցել է մեծահասակների, ծնողների, ուսուցիչների և որոշում կայացնողների հետ երկխոսությանը: Նրանց հնարավորություն է ընձեռնվել բարձրաձայնել իրենց խնդիրները և հանդես գալ դպրոցներում, ընտանիքներում և համայնքներում ավելի լավ առողջապահական, հիգիենայի և սննդի հնարավորություններ ունենալու իրենց իրավունքի պաշտպանությամբ՝ միմյանց օժանդակման մոտեցման միջոցով:



Երեխաներն ու երիտասարդները ստանում են միջին մասնագիտական ներառական կրթության հնարավորություններ



Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների սոցիալականացման առավել դժվարին խոչընդոտները ստեղծվում են մատչելի միջավայրի բացակայության, ընդհանուր բնակչության կարծրատիպային վերաբերմունքի, կրթական հնարավորությունների՝ այդ թվում միջին մասնագիտական կրթական ծրագրերի բացակայության, զբաղվածության հնարավորությունների բացակայության և անբավարար գնահատման հետևանքով: Բոլոր այս խոչընդոտներն էլ ավելի են վտանգում և սոցիալապես խոցելի դարձնում հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքներին: Միջին մասնագիտական հմտությունների զարգացման հնարավորությունները կարող են հանդիսանալ որպես կամուրջ հաշմանդամության և ապագա աշխատանքի միջև: «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության մոտեցումը հաշմանդամ երեխաների և երիտասարդների ներառական մասնագիտական կրթության խթանման հարցում, ի թիվս այլ բաների, ներառում է հետևյալը՝

- Հաշմանդամություն ունեցող երիտասարդներին տրամադրել մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն՝ գիշերօթիկ/ հատուկ դպրոցներում երեխաների և ծնողների խմբերի հետ քննարկումների, ինչպես նաև համայնքներում իրազեկության բարձրացման հանդիպումների կազմակերպման միջոցով:
- Հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրման ապահովման համար, միջին մասնագիտական հաստատությունների ֆիզիկական և ուսուցման միջավայրի բարելավում՝ ուսուցիչների և աշխատակիցների կարողությունների զարգացման, հարմարեցված մեթոդաբանության և օժանդակ նյութերի մշակման միջոցով:

Երեխաների իրավունքների կառավարում

Վերլուծություն՝ երեխաների կարիքների բավարարման նպատակով

Երեխաները Հայաստանում հանդիպում են բազմաթիվ խնդիրների: Որպեսզի կարողանանք ավելի լավ արձագանքել երեխաների կարիքներին, առաջին անգամ Հայաստանում իրականացվել է Երեխաների իրավունքների իրավիճակի համապարփակ վերլուծություն: Վերլուծությունը մանրամասն նկարագրում է, թե որքանով է իրականացվում երեխաների իրավունքների պաշտպանությունը և վերլուծում դրանց իրականացման խոչընդոտ հանդիսացող երևույթները: Վերլուծության նպատակն է հավաքագրել բավարար տեղեկատվություն՝ «բավականին լավ» եզրահանգումներ իրականացնելու և ռազմավարական որոշումների կայացման գործընթացում դրանք ներկայացնելու նպատակով: Երեխաների իրավունքների իրավիճակի վերլուծությունը արժեքավոր գործիք է կառավարության, դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և բոլոր շահագրգիռ կողմերի համար, ովքեր ծագում են ապահովել երեխաների իրավունքների պաշտպանությունը Հայաստանում:

Երեխայի իրավունքների արդյունավետ ներառում ազգային սահմանադրության մեջ

Երեխաների իրավունքների սահմանադրականացումը այդ իրավունքների պաշտպանությունը կարգավորելու կարևոր ազգային մեխանիզմ է: Մինչդեռ, այդ իրավունքների սահմանադրականացումը պետք է իրականացվի հիմնական սկզբունքների միջոցով և երեխայի լավագույն շահերի հիման վրա: Այսպիսով, անհրաժեշտ է իրագործել հնարավոր բոլոր ջանքերը՝ համապատասխան օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու և գոյություն ունեցող գործելակերպը վերանայելու համար, ապահովելով, որպեսզի երեխաների լավագույն շահերը (որպես իրավունքների ինքնուրույն կրող) դիտարկվեն որպես առաջնահերթություն՝ երեխաների պաշտպանությանն ու զարգացմանն ուղղված հասարակական և մասնավոր ցանկացած միջոցառման ժամանակ:

Այս տեսանկյունից, ելնելով և հաշվի առնելով ՀՀ կառավարության սահմանադրական բարեփոխումների նախաձեռնությունը, «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը ներկայացրել է սահմանադրական բարեփոխումների նախագծում երեխաների իրավունքների պատշաճ արտացոլումն ապահովող մի շարք դիտարկումներ և առաջարկություններ:

Երեխայի մասնակցության ապահովումը՝ որպես իրենց իրավունքների պաշտպանության երաջխիք

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը կարևորում է երեխաների մասնակցությունն իրենց առնչվող խնդիրների քննարկման գործընթացում և անում է ամեն ինչ՝ նրանց ձայնը լսելի դարձնելու համար: Ցավոք սրտի,

Հայաստանում դեռևս ամուր դիրք են գրավում այն հասարակական կարծրատիպերը, որ երեխաների կարծիքներն անտեղի են: Կարծիքների ձևավորման և բարձրաձայնելու հնարավորությունների բացակայության հետևանքով սահմանափակվում է երեխաների՝ սեփական իրավունքների իրավաստերը լինելու գիտակցությունը, ինչպես նաև թույլ չի տրվում զարգացնել մասնակցության կարողությունները:

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը օգտագործում է ամեն հնարավորություն՝ քննարկումներին և որոշումներին կայացման գործընթացին երեխաների մասնակցությունը ջատագովելու և ապահովելու համար: Մենք ստեղծել են վառ և տաղանդավոր երեխաներից ու երիտասարդներից կազմված խորհրդատվական մի խումբ, ովքեր ակտիվորեն մասնակցում են մեր նախաձեռնությունների պլանավորման, իրականացման և գնահատման գործընթացներին: Քաղաքացիական գործունեության միջազգային օրվան նվիրված միջոցառումները, երեխաների իրավունքների սահմանադրականացման շուրջ քննարկումները, երեխաների իրավունքների իրավիճակի վերլուծության ներկայացումը, փախստականների համաշխարհային օրվա կապակցությամբ կազմակերպված լուսանկարչական ցուցահանդեսը միայն մի մասն են այն միջոցառումների, որոնք իրականացվել են այդ խորհրդատվական խմբի և նրանց կողմից մոբիլիզացված այլ երեխաների անմիջական ներգրավմամբ և ջանքերով:

Մեր գործունեության մեկ այլ կարևորագույն ոլորտ է երեխաների և երիտասարդների հետ արտադպրոցական կրթական միջոցառումների կազմակերպումը: Այդ միջոցառումները նպաստում են նրանց մասնակցության խթանմանը, կարողությունների և գիտելիքների զարգացմանը, վերաբերմունքի, վարքագծի և գործելակերպի կերտմանը տարբեր ոլորտներում՝ այդ թվում հիգիենա, առողջ ապրելակերպ, երեխաների իրավունքների պաշտպանություն և մասնակցություն, բռնության դեմ ինքնապաշտպանություն, հանդուրժողականություն և այլն: Միջոցառումների ընթացքում կիրառվել են մասնակցային մեթոդներ՝ այդ թվում միմյանց օժանդակման մոտեցումը, 8-ից 16 տարեկան երեխաների ներգրավմամբ: Ապահովվել է նաև ուսուցիչների, ծնողների և խնամակալների մասնակցությունը՝ ստացած գիտելիքների և հմտությունների ամրապնդման նպատակով: Մեր ծրագրերում ընգրկել ենք երեխաներ ողջ երկրի բազմաթիվ համայնքներից՝ համախմբելով փախստականների, տեղացիների, հաշմանդամ և այլ խոցելի կամ մեկուսացված երեխաների:

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության պրակտիկայի ակադեմիան տրամադրում է ուսուցման և մասնագիտական կողմնորոշման տեխնիկական աջակցություն՝ աշխատաշուկա մուտք գործող երիտասարդներին: 2015 թվականին մենք ունեցել ենք ութ կամավորներ Հայաստանից, Մյանմայից, Մեծ Բրիտանիայից և ԱՄՆ-ից: Ընդհանուր առմամբ, ամբողջ տարվա ընթացքում, նրանք 1000 ժամ են տրամադրել մեր կամավորական ծրագրերին:

Կենսամակարդակի բարելավում՝ աշխատանքի և միջին մասնագիտական կրթության հնարավորությունների ընդլայնման միջոցով

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը կարևորում է կենսամակարդակի զարգացումը, որպես խաչաձևվող ոլորտ և հիմք՝ երեխաների և նրանց ընտանիքների բարեկեցությունը ապահովելու համար: Սոցիալապես անապահով բնակչությանը՝ այդ թվում փախստականներին և հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն ցուցաբերելու նպատակով, մեր կազմակերպությունն առաջարկել է եկամուտների ձևավորման կարճաժամկետ և երկարաժամկետ լուծումներ, բիզնեսի զարգացման և սոցիալական գործընկերության մոդելներ:

Փախստականների ցուցաբերվող աջակցության մեր նախաձեռնությունների նպատակն է նպաստել Սիրիայից տեղահանված բնակչության բարեկեցության ապահովմանը՝ հմտությունների զարգացման, ինչպես նաև մասնակցության խթանման, ինտեգրման և հզորացման գործընթացներին նրանց մասնակից դարձնելու միջոցով: Տեղահանված բնակչության կարևորագույն խնդիրներից մեկը նոր շուկային համապատասխան հմտությունների զարգացումն է, որն էլ հանդիսացել է մեր ծրագրի ռազմավարական նպատակներից մեկը: Բացի այդ, ծրագիրը կարևորում է տեղահանված ընտանիքների եկամուտների ավելացման հնարավորությունների ընդլայնումը և տեղական մակարդակում իրենց շահերի պաշտպանությանը ակտիվ մասնակցության ապահովումը:

Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խնդիրը «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության 2015 թվականի գործունեության մեկ այլ կարևոր ուղղություն է: Հայաստանում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց համար փորձել ենք ստեղծել զբաղվածության և միջին մասնագիտական կրթության ծառայությունների տրամադրման արդյունավետ մոդել՝ հետևյալ գործողությունների միջոցով՝




1. Հաշմանդամություն ունեցող անձանց անձնական զարգացում՝ գնահատման, հմտությունների զարգացման և աշխատանքի տեղավորման միջոցով:
2. Ծառայություն մատուցողների, հաշմանդամ անձանց խնդիրներով զբաղվող կազմակերպությունների, հանրային/ մասնավոր ոլորտի գործատուների և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կարողությունների զարգացում՝ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների բավարարման նպատակով:
3. ՀՀ-ների, համացանցի և համաժողովների օգտագործում՝ հանրային իրազեկության մակարդակի բարձրացման և հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների հանրայնացման նպատակով:
4. ՀՀ կառավարությանը արտաքին տեխնիկական աջակցության տրամադրում՝ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ծառայությունների և դրանց առնչվող ռազմավարությունների ու քաղաքականության մշակման, իրականացման և մշտադիտարկման գործում:

Ֆինանսական տվյալներ

2015 թվականը ևս մեկ արդյունավետ տարի էր «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության համար՝ Հայաստանում բնակվող երեխաների և նրանց ընտանիքների համար իրականացվող ծրագրերի շարունակականության ապահովման նպատակով ֆինանսական միջոցների հավաքագրման առումով: Այս տարվա ընթացքում մեր ծրագրերի իրականացմանն են նպաստել թվով տասնմեկ միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպություններ: «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությանը ցուցաբերած աջակցության տարեկան ընդհանուր բյուջեն կազմել է ավելի քան 1.425.000 ԱՄՆ դոլար:

Ի լրումն միջազգային աջակցության, տեղական և պետական կառավարման մարմինները, գործարար անձինք և այլ գործընկերներ նույնպես իրենց ֆինանսական ներդրումն են ունեցել մեր ջանքերի իրականացմանը՝ ավելի քան 180.000 ԱՄՆ դոլարի չափով:

Ստորև բերված պատկերը ցույց է տալիս մեր կազմակերպության ֆինանսական միջոցների տոկոսային հարաբերությունը՝ ըստ կազմակերպության գործունեության յուրաքանչյուր ոլորտի:



Դոնոր կազմակերպություններ

Պետական կառավարման մարմինների, բազմակողմ հաստատությունների և կազմակերպությունների կողմից տրամադրվող դրամաշնորհների միջոցով է ապահովվել «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության այն ծրագրերի և նախաձեռնությունների իրականացումը, որոնք 2015 թվականին զգալիորեն բարելավել են երեխաների կյանքը: Կարիքավոր երեխաների անունից, մեր երախտագիտությունն ենք հայտնում այն կազմակերպություններին և անձանց, ում շնորհիվ հնարավոր դարձան այդ բարեփոխումները: Մենք նաև շնորհակալ ենք, որ հենց «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությանը վստահվեց այդ փոփոխություններն իրականացնելու աշխատանքը:

Կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը շնորհակալ է նաև այն աջակցության համար, որ տրամադրվել է «Սեյվ դը չիլդրեն» անդամ կազմակերպությունների կողմից՝ Հայաստանի երեխաների կյանքում դրական փոփոխությունների խթանման նպատակով:

Ցանկանում ենք առանձին շնորհակալություն հայտնել տեղական կառավարման մարմիններին՝ շարունակական գործընկերության ապահովման և շոշափելի արդյունքների հասնելու ջանքերում ունեցած իրենց ավանդի համար:

Դոնոր կազմակերպություններ

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն

ԱՄՆ պետքարտուղարության Բնակչության, փախստականների և միգրացիայի բյուրո

Եվրահանձնաժողովի Մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչություն

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ)

ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատար

Եվրամիություն

«Սեյվ դը չիլդրեն» անդամ կազմակերպություններ

«Սեյվ դը չիլդրեն» ԱՄՆ

«Սեյվ դը չիլդրեն» Նիդերլանդներ

«Սեյվ դը չիլդրեն» Շվեյցարիա

Մեր գործընկերները

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչությունը հավատում է, որ գործընկերները և համագործակցությունը մեծ դեր ունեն երկրում իրականացվող ծրագրերի հաջողության և արդյունավետության գործում: Համագործակցությունը չափազանց կարևոր է մեր կարողությունները

առավելագույնին հասցնելու և մեր երեխաների համար ավելին անելու գործում: Հայաստանում մենք գործընկերային հարաբերություններ ենք կառուցում երեխաների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, համայնքների, պետական և մասնավոր հատվածի հետ, ապահովում ենք գիտելիքի և դրական ազդեցության փոխանցում, կարողությունների զարգացում և ամրապնդում՝ փոփոխության տեսության համաձայն, երեխաների իրավունքների ապահովման նպատակով:

2015 թվականին համագործակցել ենք ավելի քան 50 գործընկեր կազմակերպությունների հետ, որոնց հետ ակնկալում ենք շարունակել մեր արդյունավետ գործակցությունը նաև առաջիկա տարիներին:

Մենք շնորհակալ ենք մեր բոլոր գործընկերներին, և մասնավորապես հետևյալ կառույցներին ու կազմակերպություններին՝

ՀՀ Պետական կառավարման մարմիններ

- Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն
- Սփյուռքի նախարարություն
- Կրթության և գիտության նախարարություն
- Առողջապահության նախարարություն
- Արդարադատության նախարարություն
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- Կրթության ազգային ինստիտուտ
- ՀՀ ոստիկանություն
- Մարզային իշխանություններ/ մարզպետարաններ
- Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ
- ՀՀ քննչական կոմիտե
- Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա
- Հրահրվածության պետական ծառայություն գործակալություն
- Միգրացիոն պետական ծառայություն

ՀՀ Տեղական ինքնակառավարման մարմիններ/ համայնքներ

- Աբովյանի քաղաքապետարան
- Սպիտակի քաղաքապետարան
- Վանաձորի քաղաքապետարան
- Երևանի քաղաքապետարան
- Գեղարքունիքի և Լոռու մարզերի տեղական համայնքներ

Միջազգային և արտասահմանյան կազմակերպություններ

- Ակտիվա միջազգային հիմնադրամ
- Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակ
- Քառյուցիկ փարթ ինթերնեշնլ
- Դի Վի Վի ինթերնեշնլ
- Զի Այ Ջեք
- ԿԱՀԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամ
- ՄԱԿ-ի Մարդասիրական գործերի համակարգման գրասենյակ
- Բաց հասարակության հիմնադրամ
- ՕՔՍՖԱՄ
- ՄԱԿ-ի Հարգացման ծրագիր
- ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ
- ՄԱԿ-ի Փախստականների հարցերով Գերագույն Հանձնակատարի գրասենյակ
- ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ)
- ՄԱԿ-ի Աղետների նվազեցման միջազգային ռազմավարություն
- Համաշխարհային բանկ
- Վորլդ Վիժն

Տեղական կազմակերպություններ

- ՀԱԼԷՊ հայրենակցական բարեսիրական ՀԿ
- Ապելլա քաղաքական վերլուծության և երկխոսության ինստիտուտ
- Արմավիրի զարգացման կենտրոն ՀԿ
- Հայկական կարմիր խաչի ընկերություն
- Հայաստանի պետական մանկավարժական համալսարան
- Աստղացույց ՀԿ
- Հույսի կամուրջ ՀԿ
- Հայկական Կարիտաս ԲՀԿ
- Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն ՀԿ
- Երեխաների իրավունքների պաշտպանության ցանց
- Երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամ
- Աղետների ռիսկերի նվազեցման ազգային հարթակ
- Կրթական տեխնոլոգիաների աջակցության կենտրոն
- Լիարժեք կյանք ՀԿ
- Առողջապահական հիմնարկներ
- Հայաստանի հելսինկյան կոմիտե
- Հույս, կյանք, հավատ, ապագա երիտասարդական ՀԿ
- Հյուման Դիգնիթի ընդ Փիս բարեգործական հիմնադրամ
- Հույսի Մեծամոր ՀԿ
- Մարդկային զարգացման միջազգային կենտրոն ՀԿ
- Խարիսխ ՀԿ
- ԽորանԱրդ ինտելեկտուալ կենտրոն ՀԿ
- Մարտունու կանանց համայնքային խորհուրդ ՀԿ
- Մոր և մանկան առողջության դաշինք
- Միասին ՀԿ
- Առաքելություն Հայաստան ՀԿ
- Լեռնային ծաղիկներ ՀԿ
- Գործընկերություն և ուսուցում ՀԿ
- Փրկություն ՀԿ
- Մասնագիտական կրթության բարեփոխումներ ՀԿ
- Փյունիկ ՀԿ
- Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն ՀԿ
- Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամ
- Սկարպ ՀԿ
- Դպրոցներ և մանկապարտեզներ
- Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն
- Սպիտակի հողագործ ՀԿ
- Ծիածան ՀԿ
- Միջին մասնագիտական կրթության և ուսուցման հաստատություններ
- Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության Ունիսոն ՀԿ

Գործարար կառույցներ

- Օրդֆիլմ ՍՊԸ
- Հարություն Բաբաջանյան ԱՁ
- Լենտեքս ՍՊԸ
- Հրանուշ Սարգսյան ԱՁ
- Ինստիգեյթ մոբայլ ՓԲԸ



2016-2018թթ. ռազմավարության համառոտ նկարագիր

ՆՊԱՏԱԿ

Ոգեցնել մարդկությանը փոխելու վերաբերմունքը երեխաների հանդեպ և հասնել անհապաղ և կայուն փոփոխությունների երեխաների կյանքում:

Մանկական աղքատության կրճատում

Շատ աղքատ՝ այդ թվում փախստականների և հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքների և իզական և արական սեռի խնամակալները պետք է գինվեն անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով, ավելացնեն իրենց տնօրինելի եկամուտը ձեռնարկատիրության և զբաղվածության միջոցով և ի վիճակի լինեն հոգ տանել իրենց երեխաների գոյատևման, ուսուցման և պաշտպանության մասին՝ նաև աղետների և տնտեսական դժվարությունների ժամանակ:

Դեռահաս փախստական աղջիկներն ու տղաները, հաշմանդամ երիտասարդները, խնամքի հաստատությունների երեխաները/ երիտասարդները, երիտասարդ մայրերը պետք է օգտվեն ներառական մասնագիտական կրթության մոդելներից և կյանքի հմտությունների զարգացման հնարավորություններից: Երեխանորի աղքատության ցուցանիշները պետք է արտացոլվեն պետական կառավարման ծրագրերում և գործողությունների պլաններում:

Մանկական աղքատության պատճառների գնահատում, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցություն՝ մանկական աղքատության կրճատման միջոցառումների ջատագովման նպատակով:

Կրթություն

Օգնության կարիք ունեցող աղջիկներն ու տղաները պետք է օգտվեն Հայաստանում գերծող վաղ մանկական խնամքի և զարգացման որակյալ ներառական ծառայություններից: Հայաստանում բնակվող երեխաներն՝ այդ թվում առավել մեկուսացածները, պետք է սովորեն առողջ, անվտանգ և ներառական դպրոցի միջավայրում:

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը նպաստում է երեխայակենտրոն և ներառական դպրոցների և նախադպրոցական հաստատությունների արդյունավետ կառավարման համակարգի խթանմանը:

«Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության կողմից աջակցություն ստացող հայաստանյան կրթական հաստատությունները պետք է հնարավորություն ունենան տրամադրել շարունակական կրթության ծառայություններ արտակարգ իրավիճակների և ճգնաժամերի ժամանակ: Արտակարգ իրավիճակների առաջին իսկ օրերից պետք է ապահովվի կրթության շարունակականությունը՝ ինչպես հիմնական, այնպես էլ վաղ մանկական խնամքի և զարգացման հաստատություններում:

Իրավունքների պաշտպանություն

Այլընտրանքային խնամքի ծառայությունները հասանելի են երկրի ողջ տարածքում, իսկ խնամատարության տարբեր մոդելների կիրառումն ընդունված է պետական կառավարման մարմինների կողմից և օգտագործվում է համապատասխան խնամքի կարիք ունեցող երեխաներին խնամատար ընտանիքներում տեղավորելու ժամանակ:

Երեխաները պաշտպանված են տանը և դպրոցում հոգեբանական բռնության գործողություններից՝ ծնողների համար նախատեսված դասընթացների, ծաղրանքների կանխման ծրագրերի և իրավական մեխանիզմների կիրառման միջոցով:

Տղաներն ու աղջիկներըն այդ թվում նաև հաշմանդամություն ունեցող, պաշտպանված են սեռական բռնություններից՝ երեխաների սեռական բռնության դեմ պայքարի նպատակով իրականացվող դասընթացների և համացանցի անվտանգության խթանման այն մեխանիզմների միջոցով, որոնք նպատակ ունեն կանխել երեխաների առցանց սեռական չարաշահման և սեռական բռնության այլ ձևերը:

Ուսումնական հաստատությունների աշխատակազմը և գործընկեր կազմակերպությունները հատուկ պատրաստվածության դասընթացներ են անցնում՝ արտակարգ իրավիճակներում՝ այդ թվում աղետների և հակամարտությունների ժամանակ երեխաներին բռնությունից պաշտպանելու նպատակով:

Մանկական աշխատանքի միասնական արևելասկայի վերաբերյալ տեղեկության և ապացույցների հավաքագրում:

Երեխաները պաշտպանված են երեխաների պաշտպանության առավել ուժեղ համակարգի, համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսների, պետական մարմինների հստակ քաղաքականության և դերերի ու պարտականությունների հստակ բաշխման շնորհիվ:

Սեռական հիմքով միասնական գործելակերպի ծավալների նվազում:

Երեխայի իրավունքների կառավարում

Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգված ապացույցները հասանելի են մշտադիտարկման համակարգերի բարելավման և երեխայի մասնակցությամբ ապահովվող հաշվետվողականության միջոցով:

Երեխաները ներգրավված են իրենց իրավունքների պաշտպանության մշտադիտարկման համակարգված աշխատանքներին՝ տեղական և կենտրոնական մակարդակներում:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ապահովված են երեխաների իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ կարողություններով և ռեսուրսներով:

Պետական բյուջեի և հանրային ծախսերի գնահատում՝ նախատեսված երեխաներին տրամադրվող հիմնական ծառայությունների համար, համապատասխան տվյալների հասանելիության ապահովում՝ հարկատուների համար:



Save the Children

Սեյվ ի՞նչ Չիլդրեն Ինթերնեշնլ հայաստանյան ներկայացուցչություն
www.armenia.savethechildren.net
e-mail: armenia@savethechildren.org
Հասցե՝ ՀՀ, Երևան, Ազատության պողոտա 27
Հեռ.՝ +(374-10) 20 10 14, 20 10 25

